

այդքան չէր խօսուել ու գրուել, մտածուել ու ծրագրուել: Հայ կեանքը կը ծփար ալեկոծութեան մէջ: Որքա՛ն բուռն ապրումներ եւ ո՛ր պիտի սրարչաւ յառաջադիմութիւն այդ քսան տարուան ընթացքին, մանաւանդ ոռուսահայոց մէջ:

Ամէն ինչ թափ ու թռիչք առաւ — տնտեսական կեանք, լեզու, արուեստ, գրականութիւն, հայրենագիտութիւն, թատրոն: Դպրոցներու լայնարձակ ցանց մը քաղաքներում ու գիւղերում, մտաւորական առաջնորդներու ղեկեցիկ, աննախընթաց շարան մը՝ բոլոր մարզերու մէջ — մանկավարժներ, հայկաբաններ ու պատմագիրներ (Բահաթրեան, Բերբերեան, Պայասանեան, Չամչեան, Գարագաշեան, Ալիշան, Ալթընեան, Վենետիկի ու Վիեննայի ուրիշ հայրեր), մեծատաղանդ հոետորներ ու քարոզիչներ (Թրիմեան, Ռուսինեան, Նարպէյ, Ստեփանէ), բազմաթիւ բանաստեղծներ, վիպագիրներ ու հրատարակագիրներ, երգիծաբան գրողներ (Պատկանեան, Պէշիկիթաշլեան*), Արծրունի, Ծերենց, Պարոնեան, Մամուրեան, Տէմիրջիպաշեան, Մինաս Չերազ եւայլն), նոյնիսկ շարք մը հայ դէմքեր աշխարհահռչակ անուններով — Ալլաղովսկի, Լօրիս-Մելիքով, Նուպար փաշա: Վերջապէս, ղեկարուեստի երկու տիտաններ, որոնց շնորհիւ հայ արուեստը հասաւ իր փառքի գագաթներուն, երկուքն ալ անդուգական՝ իւրաքանչիւրը իր մարզին մէջ, երկուքն ալ կղզիացած՝ իւրաքանչիւրը, որպէս հսկայ, ճիւղատարած կաղնի մը, մենաւոր եւ տիրական՝ չըջապատող մտաւոր բուսականութեան մէջ. — Բաֆֆի եւ Ադամեան:

Ստեղծագործող շրջան մըն էր գերազանցապէս: Շարժումը հետզհետէ թուլացաւ ոռուսահայոց մէջ Ալէքսանդր Բ-ի սպանութենէն ի վեր, բայց քանի մը տարի ոռուսական գրաքննութիւնը յարաբերական ազատութիւն կու-

տար հայ գրողներուն ու գործիչներուն:

Հայոց կեանքը կը յեղաշրջուէր կրկնակ զօրաւոր ազդեցութեան տակ — ոռուսական եւ արեւմտեան: Մտքի ազատագրութեան հով մը կ'անցնէր բովանդակ Արեւմուտքէն: Ռամկավարութեան ու ընկերավարութեան միջազգային հոսանքները, ծայր տալով հանրապետական Ֆրանսայէն, կը հեղեղէին ողջ եւրոպական ցամաքը, կը փոխազդուէին եւ դէպի ցարերու մայրաքաղաքը. «Նարոզնայա Վօլխա» ի յոյակապ հերոսներու թեւերուն վրայ Յեղափոխութեան Մոդըրը կը կատարէր իր արիւնալի թափօրը եւ աշխարհի ամենահզօր հրամանատարը, Յար Ալէքսանդր, կ'ընկնէր արիւնաթաթախ՝ Յելեարօքներու ուժանակային հարուածներուն տակ: Ազատական հոսանքը կը նուսճէր ամենաընտիր մտաւորականութեան զանգուածները եւ Լօրիս-Մելիքով կ'ուրուագծէր առաջին Սահմանադրութիւնը...

Արեւմուտքում՝ հին, քարացած դօզմերը կը խորտակուէին պատմական քննադատութեան անողոք հարուածներուն տակ, կը հրօշակուէր ջինջ, վերլուծող բանականութիւնը, — եւ ազատ միտքը, յաղթական ու հպարտ, կը շեշտուէր բոլոր մարզերուն մէջ, անգամ կիսաւատական երկիրներում: Գրականութեան մէջ ղեռ կը տիրէր այն մեծ, համաշխարհային ու բեղմնաւոր հոսանքը, որ կը կոչուի ռօմանտիզմ, ղեռ կանգուն էր անոր հինաւուրց պարագլուխը՝ Վիքտոր Հիւգօ, որու հմայքը կը ճառագայթէր բոլոր երկիրներու, մասնաւորապէս Ռուսաստանի վրայ: Տուրգենևիվ, ոռու գրականութեան խոշորագոյն սիւներէն մէկը եւ նոյն հոսանքի ամենափայլուն ներկայացուցիչը Ռուսաստանում, կը հրատարակէր իր դիտումնաւոր վէպերու շարքը, հրատարակ կը նետէր ցնցող վէպ մը, նիւթ առնելով Բուրգարիայի ազատագրական շարժումներէն («Նախօրեակին»):

Այդ բոլորը կախարդիչ ազդեցութիւն կը գործէր Յակոբ-Մելիքեան-Բաֆֆիի նուրը, ղերզգայուն հոգու եւ երեւակայութեան վերայ:

Մեր նպատակէն դուրս է՝ ցուցադրել այստեղ մեր մեծ վիպագրի ամբողջական դէմքը — կը գտնուիմ Ֆրանսայի խուլ գաւառի մը մէջ

* Այս դէմքերէն մէկ քանիսը ծանօթ էին ղեռ 60ական ու նոյնիսկ 50-ական թուականներուն, բայց յետագայ երկու տասնեակ տարիներու մէջ էր, որ անոնք ծաւալեցին իրենց տաղանդի բովանդակ ոյժը եւ ներկայացան հայութեանը իրենց ամբողջ հասակով: Մ. Վ.